«ՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՔՈ ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ Է» Ե. ՉԱՐԵՆՑ

ՀԱՅԵՐԸ

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

«ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐ 100 ԴՈԼԱՐ «ՆՈՐ ՀԱԼԵՊ»-ԻՆ»

02/03/2015 Սփյուռք No comments

Սոչիի «Սևան» հայկական համայնքը 25 տարվա պատմություն ունի

Փետրվարի 26-ին Սոչիի հայկական համայնքը շուքով նշեց "Սևան" հասարակական կազմակերպության 25-ամյակը: Հոբելյանական երեկոն սկսվեց "Զմեռային թատրոնի" ճեմասրահում բացված ցուցահանդեսով, որը կազմակերպել էր "Համշենի բակ" թանգարանի տնօրեն Էդուարդ Կալաջյանը: Տոնակատարության հյուրերը կարող էին ծանոթանալ համշենահայերի կյանքին ու գործունեությանը, կենցաղին, մշակույթին, լեզվին ու գրականությանը՝ ցուցադրված հազվագյուտ իրերով, նկարներով ու պատկերներով… Մինչև հանդիսավոր արարողության սկսվելը ճեմասրահը քիչ-քիչ լցվում էր Սոչիի հայության ներկայացուցիչներով ու հյուրերով: Կենտրոնական հեռուստատեսության, տեղի պարբերականների լրագրողները նկարահանում ու հարցազրույցներ էին կազմակերպում հայկական համայնքի առաջնորդների, ակտիվիստների, մշակութային գործիչների և հանդիսատեսի հետ:

Հանդիսավոր արարողությունն սկսվեց Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրհներգերի կատարմամբ: Դահլիճը հոտնկայս ունկնդրեց օրհներգերը, որից հետո բեմահարթակ հրավիրվեց Սոչիի "Սևան" հայկական համայնքի նախագահ Հմայակ Ուստյանը: Նա ելույթ ունեցավ հանդիսատեսի և հյուրերի առջև համայնքի բազմաճավալ գործունեության մասին բովանդակալից զեկույցով: Ցուցադրվեց կինոժապավեն Սոչիի հայկական համայնքի կազմավորման պատմության, կայացման դժվարին տարիների, գլխավոր դերակատարների, կազմակերպության ակունքներում կանգնած ազգային հերոսների մասին: Այնուհետև բեմ հրավիրվեցին տարեդարձի հյուրերը Հայաստանի Հանրապետությունից, Աբխազիայից, Մոսկվայից, Դոնի Ռոստովից, Կրասնոդարի երկրամասից, ինչպես նաև Սոչիի քաղաքապետն իր տեղակալներով: Հնչեց ՀՀ Սփյուռքի նախարարի տեսաուղերձը ուղղված Սոչիի հայությանը, քաղաքի ղեկավարությանն ու բոլոր ներկաներին: Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարության կողմից բարձր պարգևներով ու շքանշաններով պարգևատրվեցին Սոչիի հայկական համայնքի ակտիվ հասարակական գործիչները, կրթության, մշակութային, մարզական բնագավառների լավագույն ներկայացուցիչները: Պարգևներն ու պատվոգրերը օրվա հերոսներին հանձնեց Երևանի Պետական Համալսարանի Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխնախագահ Միհեր Հովհաննիսյանը: ԵՊՀ ներկայացուցիչը ընթերցեց Երևանի Պետական Համալսարանի ռեկտոր պ.գ.դ., պրոֆեսոր Արամ Սիմոնյանի շնորհավորական ուղերձը Սոչիի հայկական համայնքի 25-ամյա հոբելյանի կապակցությամբ: Առանձնահատուկ բարձր գնահատականի արժանացավ համայնքը Սոչիի պետական կառավարության կողմից: Քաղաքապետ Անատոլիյ Պախոմովը ընդգծեց հայկական համայնքի առանցքային կարևորագույն դերն ու նշանակությունը քաղաքի տնտեսական, քաղաքական, հասարակական, մշակութային, մարզական կյանքի զարգացման, միջազգային հարաբերությունների բարելավման գործում: Քաղաքային ժողովի նախագահ Անատոլիյ Լուցիկը իր ելույթում ցուցաբերեց հայ ժողովրդի պատմության հիանալի իմացություն, շեշտելով, որ հայերը ամենուրեք առաջինն են, առաջինն են պետականորեն ընդունել քրիստոնեությունը, իսկ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը 29 տարով մեծ է Հռոմից և այլն…. Ընգծվեց, որ Սոչիի հայերը ամենուր փայլում են իրենց կեցվածքով, կրթա-մշակութային բարձր մակարդակով, տաղանդավոր, ստեղծագործ ուժով:

Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ Սամվել Ղազարյանը ընթերցեց ՌՀՄ-ի նախագահ Արա Աբրահամյանի շնորհավորական ուղերձը, ինչպես նաև ելույթ ունեցավ ներկաների առջև լավագույն բարեմաղթանքներով ու ցանկություններով: Շնորհավորեցին հոբելյարներին նաև Հայաստանի Հանրապետության դեսպան Դոնի Ռոստովում՝ Արարատ Գոմցյանը, գեներալ լեյտենանտ Նորատ Տեր Գրիգորյանցը, Դոնի Ռոստովի հայկական համայնքի փոխնախագահ Սերգեյ Սայադովը, Սոչիի վրացական համայնքի նախագահ Սիմոն Ուչաձեն, մյուս ազգերի համայնքային կառույցների ներկայացուցիչները…

Գեղեցիկ համարներով ու կոմպոզիցիաներով ելույթ ունեցան Սոչիի հայկական ժողովրդական պարի

«Գարուն» համույթը (գեղարվեստական ղեկավար՝Մարգարիտա Անանյան), Լազարևսկի շրջանի Գրիգոր Մազլումյանի անվան Ազգերի մշակույթների կենտրոնի «Համշեն», «Նաիրի» հայկական ժողովրդական պարի համույթները (գեղարվեստական ղեկավար՝ Վարդան Պողոսյան), «Ուրարտու» համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Գեորգի Շաքարյան), «Դեղձանիկ» երգի խումբը, (գեղ. ղեկավար Անդրանիկ Սարգսյան), «Վան» հայկական երգի խմբի մենակատար Նոնա Սարգսյանը, համշենահայ երգիչներ ու երգչուհիներ, այլ երաժիշտներ ու ասմունքի վարպետներ:

Երեկոն, նվիրված Սոչիի հայկական համայնքի հոբելյանական 25 ամյակին, տևեց շուրջ չորսը ժամ: Սակայն հանդիսատեսը չէր շտապում լքել դահլիճը:

Երեկոն եզրափակվեց տոնական ճաշկերույթով Սոչիի “Դինաստիա” ռեստորանում:

Անահիտ Անտոնյան

ՌԴ, Սոչի